371.13 *https://orcid.org/0000-0002-4277-3453* **DOI:10.46991/ai.2023.1.1**

THE STRATEGIC ROLE OF THE "TEACHER LEADERSHIP" MASTER'S EDUCATIONAL PROGRAM IN THE FRAMEWORK OF THE "EDUCATION FOR ALL" GLOBAL MOVEMENT

Nazik Harutyunyan,
Doctor of Pedagogical Sciences, Professor
Yerevan State University, Armenia
nazik.harutyunyan@ysu.am

Summary

"The future of humanity is in the hands of teachers."
V. Hugo
"The nation that has the best education is strong."
Av. Isahakyan

"The activity of a teacher is a unique art, which is characterized by high human culture, encyclopedic knowledge, art of mastering speaking perfectly and infinite love for his work."
Jan Amos Komensky

At all times, the crucial role of teaching staff has been emphasized and valued, not only in ensuring the quality of education, but also in educating a generation and citizen with a comprehensive and harmoniously developed, healthy psychology, state thinking, civic self-awareness and independent activity for the given country and nation, i.e. in building the future of the country. Therefore, the question of the importance of the "Teacher Leadership" educational program, analyzed in the article, is relevant, because it solves both human resources and security issues in the villages of the border regions, based on the right of children to education, with the principle of equal education. The article explains that according to the UN Convention on the Rights of the Child (1989) and the RA Law on the Rights of the Child (1996), every child living in Armenia, regardless of his nationality, race, gender, social status, religion, has equal rights, including the right to education. The article also shows that all children have the right to equal education, regardless of whether they live in the village or in the city. Meanwhile, today we have a different picture in Armenia. We have a great teaching staff shortage in the schools of remote provinces and villages of border regions. There are schools in those villages that do not have teachers for two, three, or even four subjects. And the educational program "Teacher Leadership" is dedicated to the solution of this important issue, which prepares teachers especially for schools in the villages of the border regions and remote provinces of Armenia.

The educational program is implemented by the joint efforts of Yerevan State University's Pedagogy and Education Development Center and "Teach for Armenia" Foundation. In 2022, a Cooperation agreement was signed between YSU and the "Teach for Armenia" foundation for the implementation of the project.

In the framework of the educational program, along with the courses of the pedagogical educational block, students are given courses that will form leadership abilities in them. The latter will help them carry out leadership activities not only in the school, but also in the community, ensuring school-family-community cooperation.

Keywords: Teacher leadership, right to education, work-based learning, equal and excellent education, rights of the child, community leadership.

СТРАТЕГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ МАГИСТЕРСКОЙ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ПРОГРАММЫ «УЧИТЕЛЬСКОЕ ЛИДЕРСТВО» В РАМКАХ ГЛОБАЛЬНОГО ДВИЖЕНИЯ «ОБРАЗОВАНИЕ ДЛЯ ВСЕХ»

Назик Арутюнян
Доктор пед. наук, проф.
ЕГУ, Армения
nazik.harutyunyan@ysu.am

Аннотация

«Будущее человечества в руках учителя».
В. Гюго
«Сильна та нация, которая имеет лучшее учительство».
Ав. Исаакян
«Деятельность учителя – уникальное искусство,
которому присущи высокая человеческая культура,
энциклопедические знания, искусство совершенного владения
речью и безмерная любовь к своему делу».
Ян Амос Коменский

Во все времена подчеркивалось и ценилось значение педагогических кадров не только в обеспечении качества образования, но и в воспитании и образовании гражданина со всесторонне и гармонично развитой, здоровой психикой, государственным мышлением, гражданским самосознанием и поколения с самостоятельным образом действия, т.е. несущим ответственность за будущее данной страны и народа. Следовательно, вопрос о значимости анализируемой в статье образовательной программы «Учительское лидерство» актуален, поскольку решает как кадровые вопросы в образовательной системе, так и вопросы безопасности в селах приграничных районов на основе права детей на образование по принципу равного образования. В статье поясняется, что в соответствии с Конвенцией ООН о Правах ребенка /1989/ и Законом РА о Правах ребенка /1996/, каждый ребенок, проживающий в Армении, независимо от его национальности, расовой принадлежности, пола, социального положения, религии, имеет равные права, в том числе и право на образование. В статье также анализируется вопрос о том, что все дети имеют право на получение образования, независимо от того, проживают они в сельской местности или в городе. Между тем сегодня в Армении наблюдается иная картина. У нас большой дефицит педагогических кадров в сельских школах приграничных районов и отдаленных областей. В этих селах есть школы, в которых нет учителей по двум, трем и даже четырем предметам. Решению этого важного вопроса и посвящена образовательная программа «Учительское лидерство», которая готовит учителей именно для сельских школ приграничных районов и отдаленных областей Армении.

Образовательная программа реализуется совместными усилиями Центра педагогики и развития образования Ереванского государственного университета и фонда «Преподавай, Армения». В 2022 году для реализации этого проекта между ЕГУ и фондом «Преподавай, Армения» было подписано Соглашение о сотрудничестве. В рамках образовательной программы, наряду с курсами педагогического образовательного блока, для студентов проводятся курсы, которые будут формировать у них лидерские способности. Последние помогут им осуществлять лидерскую деятельность не только в школе, но и в сообществе, обеспечивая сотрудничество школа-семья-сообщество.

Ключевые слова: учительское лидерство, право на образование, обучение на основе деятельности, равное и превосходное образование, права детей, лидерство в сообществе.

«ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Նազիկ Հարությունյան
մանկ. գիտ. դոկտ., պրոֆեսոր
ԵՊՀ, Հայաստան
nazik.harutyunyan@ysu.am

«Մարդկության գալիքը ուսուցչի ձեռքերում է»:
Վ. Հյուգո
«Հզոր է այն ազգը, որն ունի լավագույն ուսուցչություն»:
Ա. Իսահակյան
«Ուսուցչի գործունեությունը յուրահատուկ
արվեստ է, որին ներհատուկ են մարդկային
բարձր կուլտուրան, հանրագիտարանային իմացությունը,
խոսքին կատարյալ տիրապետելու
արվեստն ու անհուն սերն իր գործի նկատմամբ»:
Յան Ամոս Կոմենսկի

Համառոտ ներածական: Բոլոր ժամանակներում էլ կարևորվել և արժևորվել է մանկավարժական կադրերի մեծ դերակատարությունը ոչ միայն կրթության որակի ապահովման, այլև տվյալ երկրի և ազգի համար համակողմանի և ներդաշնակ զարգացած, առողջ հոգեբանություն, պետական մտածողություն, քաղաքացիական ինքնագիտակցություն և ինքնուրույն գործելակերպ ունեցող սերունդ ու քաղաքացի կրթելու և դաստիարակելու, այսինքն՝ երկրի ապագան կերտելու հարցում: Հետևաբար հոդվածում վերլուծվող «Ուսուցչական առաջնորդություն» կրթական ծրագրի կարևորության հարցն արդիական է, քանի որ այն կրթության համակարգի համար լուծում է ինչպես կադրային, այնպես էլ սահմանամերձ շրջանների գյուղերում նաև անվտանգային հարցեր՝ հիմքում ունենալով երեխաների կրթության իրավունքը՝ հավասար կրթություն ստանալու սկզբունքով: Հոդվածում մեկնաբանվում է, որ ըստ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (1989 թ.) և ըստ «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի» (1996 թ.)՝ Հայաստանում ապրող յուրաքանչյուր երեխա, անկախ իր ազգությունից, ռասայական պատկանելիությունից, սեռից, սոցիալական վիճակից, դավանանքից, ունի հավասար իրավունքներ, որոնց թվում՝ և կրթության իրավունքը: Հոդվածում վերլուծվում է նաև այն հարցը, որ բոլոր երեխաներն ունեն հավասար կրթություն ստանալու իրավունք՝ անկախ իրենց գյուղաբնակ, թե քաղաքաբնակ լինելու հանգամանքից: Մինչդեռ այսօր Հայաստանում ունենք այլ պատկեր: Հեռավոր մարզերի և սահմանամերձ շրջանների գյուղերի դպրոցներում ունենք մանկավարժական կադրերի մեծ պակաս: Այդ գյուղերում կան դպրոցներ, որոնք երկու, երեք, ընդհուպ մինչև չորս ուսումնական առարկայի ուսուցիչներ չունեն: Ահա այս կարևոր հարցի լուծմանն է լծված «Ուսուցչական առաջնորդություն» կրթական ծրագիրը, որն ուսուցիչներ է պատրաստում Հայաստանի հատկապես սահմանամերձ շրջանների և հեռավոր մարզերի գյուղերի դպրոցների համար: Կրթական ծրագիրն իրականացվում է Երևանի պետական համալսարանի մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի և «Դա-

սավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի համատեղ ջանքերով։ Ծրագրի իրականացման համար ԵՊՀ-ի և «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի միջև 2022 թ. կնքվել է համագործակցության պայմանագիր։ Կրթական ծրագրի շրջանակում մանկավարժական կրթաբլոկի դասընթացներին զուգահեռ ուսանողներին տրվում են դասընթացներ, որոնք նրանց մեջ կձևավորեն առաջնորդության կարողություններ։ Վերջիններս կօգնեն նրանց առաջնորդական գործունեություն իրականացնել ոչ միայն դպրոցում, այլև համայնքում՝ ապահովելով դպրոց-ընտանիք- համայնք համագործակցությունը։

Բանալի բառեր՝ Ուսուցչական առաջնորդություն, կրթության իրավունք, աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն, հավասար և գերազանց կրթություն, երեխաների իրավունքներ, համայնքային առաջնորդություն։

Հիմնախնդիրը՝ Ուսումնասիրության հիմնախնդիրն է վերլուծել և հիմնավորել «Ուսուցչական առաջնորդություն» կրթական ծրագրի ունեցած մեծ դերակատարությունն ու կարևորությունը Հայաստանում՝ մեկնաբանելով, որ այն կրթության համակարգի համար լուծում է ինչպես կադրային, այնպես էլ սահմանամերձ շրջանների գյուղերում նաև անվտանգային հարցեր, հիմքում ունենալով երեխաների կրթության իրավունքը՝ հավասար կրթության սկզբունքով։

Հիմնախնդրին առնչվող այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն՝ Հավասար կրթության, ուսուցչական առաջնորդության և հավաքական առաջնորդության գաղափարներին են անդրադարձել և աշխատություններում իրենց մոտեցումներն են արտահայտել Ալմա Հարրիսը, Ջոնաթան Դեյլը, Ամանդա Դատնոուն և Վիկի Փարքը։ Հավասար կրթության խնդիրը համաշխարհային մասշտաբով քննարկման է դրվել և՛ Ջոմթիենում (Թաիլանդ, 1990 թ.), և՛ Դաքքարում (Սենեգալ, 2000 թ.) տեղի ունեցած «Կրթություն բոլորի համար» կրթական համաշխարհային խոշոր ֆորումներում։

Հետազոտության նպատակը՝ Հետազոտության նպատակն է վերլուծել և ներկայացնել «Ուսուցչական առաջնորդություն» կրթական ծրագրի մեծ դերակատարությունը և կարևորությունը Հայաստանի սահմանամերձ շրջանների և հեռավոր մարզերի գյուղերի դպրոցների համար առաջնորդ-ուսուցիչների պատրաստման, դպրոց-համայնք համագործակցության, ինչպես նաև երեխաների հավասար կրթության իրավունքի պաշտպանության հարցերում՝ անկախ իրենց գյուղաբնակ, թե քաղաքաբնակ լինելու հանգամանքից։

Հետազոտության նորույթը՝ Հայաստանում առաջին անգամ իրականացվող «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական կրթական ծրագրի կարևորության վերաբերյալ իրականացվում է վերլուծություն՝ մեկնաբանելով այն մեծ դերակատարությունը, որ ունի ծրագիրը, պատրաստելով առաջնորդ-ուսուցիչներ Հայաստանի սահմանամերձ շրջանների ու հեռավոր մարզերի գյուղերի դպրոցների համար և պաշտպանելով այդ շրջանների երեխաների հավասար կրթություն ստանալու իրավունքը։

Հիմնական նյութի շարադրանքը՝

«Կրթություն բոլորի համար» համաշխարհային շարժումը սկիզբ է առել 1990 թ. մարտի 5-9-ը Ջոմտիենում (Թաիլանդ) տեղի ունեցած «Կրթություն բոլորի համար» մեծ համաժողովում, որտեղ ընդունվել է համընդհանուր դեկլարացիա, որի համար հիմք են հանդիսացել «Մարդու իրավունքների մասին» ՄԱԿ-ի դեկլարացիան և «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան։ «Կրթություն բոլորի համար» համընդհանուր դեկլա-

ռացիայում մասնավորապես նշվում է. «Յուրաքանչյուր երեխա, երիտասարդ և մեծահասակ՝ որպես մարդ, ունի կրթության իրավունք, որը կբավարարի նրա բազային կրթական պահանջմունքները, կրթություն, որը նրան կտա հնարավորություն սովորելու, ճանաչելու, գործելու, ապրելու մյուսների հետ ու գոյատևելու: Խոսքը այն կրթության մասին է, որն ուղղված է բացահայտելու տաղանդներին, յուրաքանչյուր մարդու ներուժը և սովորողի անձի զարգացումն այնպես, որ մարդիկ կարողանան բարելավել սեփական կյանքը և վերակրթել հասարակությունը» [7, էջ 4]:

Ուղիղ 10 տարի հետո՝ 2000 թ. ապրիլի 26-28-ը, Դաքարում (Սենեգալ) UNESCO-ի հովանու ներքո դարձյալ տեղի է ունեցել Կրթության վերաբերյալ համաշխարհային համաժողով, և ընդունվել է «Կրթություն բոլորի համար. մեր ընդհանուր պարտավորությունների կատարումը» խորագրով փաստաթուղթը, որը հաստատում է «Կրթություն բոլորի համար» համընդհանուր դեկլարացիայի ամբողջ կոնցեպցիան [8, 1]:

2007 թ. «Կրթություն բոլորի համար» համաշխարհային շարժումը մուտք է գործել Ամերիկայի Միացյալ Նահանգներ, և Նյու Յորքում հիմնադրվել է «Դասավանդի՛ր, Ամերիկա» (Teach for America) կրթական ոչ առևտրային կազմակերպությունը (համահիմնադիրներ՝ Վենդի Կոպ և Բրետ Վիգդորց): Նպատակն էր՝ «վերացնել կրթական անհավասարությունը»:

2015 թ. «Կրթություն բոլորի համար» համաշխարհային շարժումը մուտք գործեց նաև Ռուսաստանի Դաշնություն՝ ստեղծելով «Ուսուցիչ Ռուսաստանի համար» հասարակական կազմակերպությունը (հիմնադիրներ՝ Ալյոնա Մարկովիչ և Ելենա Յարմանովա):

«Կրթություն բոլորի համար» շարժումը կրթական ոչ առևտրային անկախ կազմակերպությունների համաշխարհային ցանց է՝ միտված բոլոր երեխաների կրթական հնարավորությունների ընդլայնմանն ու կրթական անհավասարության վերացմանը:

Այսօր «Կրթություն բոլորի համար» համաշխարհային շարժումն ընդգրկում է աշխարհի 60 երկիր, որոնք, գործելով ցանցի շրջանակում, կրում են ուսուցչական առաջնորդության գաղափարը:

Ուսուցչական առաջնորդության_գաղափարն ի սկզբանե կապվել է այն մոտեցմանը, որ դասավանդումն ինքնին առաջնորդություն է, և դասավանդման միջոցով ուսուցիչը՝ որպես հիմնական հեղինակություն, աշակերտին կարող է նաև առաջնորդել դասարանում: Հետագայում այս գաղափարն ընդլայնվեց և ըստ ժամանակակից մոտեցման՝ ուսուցիչը միայն դասարանում չէ, որ պետք է լինի հեղինակություն ու առաջնորդ, այլ նաև համայնքում:

Առաջ է քաշվել հավաքական առաջնորդության գաղափարը: Սրա հիմնական էությունն այն է, որ ուսուցիչը պետք է կարողանա ոչ միայն կենտրոնացնել իր աշակերտների, այլև դպրոցի և ողջ համայնքի ներուժը՝ իրականացնելով դպրոց-ընտանիք-համայնք ակտիվ համագործակցություն:

Այս մոտեցումների համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝ «Ուսուցչական առաջնորդության» անգլիական ուղղությունը, ըստ որի՝ «Ուսուցչի առաջնորդական դերն ու մասնագիտական ազդեցությունը դպրոցի զարգացման կարևոր բաղադրիչներից են» (հեղինակներ՝ Ալմա Հարրիս, Ջոնաթան Դեյլ, Հաֆֆման) [6, 2], ինչպես նաև դպրոց-համայնք համագործակցության ուսումնասիրությունների ամերիկյան ուղղությունը, ըստ որի՝ «Կրթական բարեփոխումների միջազգային դիսկուրսների կիզակետում ուսուցիչների առաջնորդությունն ու փոխգործակցությունն են համայնքների հետ՝ որպես սովորողների ակադեմիական արդյունքների բարելավման ու համայնքի զարգացման գրավական» (ներկայացուցիչներ՝ Ամանդա Դատնոու և Վիկի Փարք) [5, 37]:

«Կրթություն բոլորի համար» համաշխարհային շարժման մոտեցումների և գաղափարի կրողն այսօր Հայաստանում **«Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամն է**, որը ստեղծվել է հիմնադրամի տնօրեն Լարիսա Հովհաննիսյանի նախաձեռնությամբ 2013 թ.:

«Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի ստեղծման հիմքում եղել է մեկ նպատակ՝ Հայաստանում ապահովել հավասար և գերազանց կրթություն Հայաստանի բոլոր դպրոցների աշակերտների համար՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական հնարավորություններից և գյուղաբնակ, թե քաղաքաբնակ լինելուց: Սա ունի իրավական հիմք: Ըստ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (1989 թ.) բոլոր երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց ծագումից, ազգային և ռասսայական պատկանելիությունից, սեռից, դավանանքից, սոցիալական վիճակից [4, հոդված 2]: Բոլոր երեխաներն ունեն կրթության իրավունք, որի հիմքում հավասար կրթություն ստանալու սկզբունքն է [4, հոդված 28]:

Հայաստանի Հանրապետությունում ապրող բոլոր երեխաների իրավունքներն ամրագրված են 1996 թ. ընդունված «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, ըստ որի՝ Հայաստանում ապրող բոլոր երեխաներն ունեն կրթության իրավունք՝ հավասար կրթություն ստանալու սկզբունքով [1, հոդված 11]:

Ներկայումս մենք Հայաստանում ունենք այլ իրավիճակ: Հայաստանի Հանրապետության հեռավոր մարզերում ու սահմանամերձ շրջանների գյուղերի դպրոցներում կա մանկավարժական կադրերի մեծ պակաս: Կան գյուղական դպրոցներ, որոնք երկու, երեք և նույնիսկ չորս ուսումնական առարկայի ուսուցիչներ չունեն: Ստացվում է, որ այս դպրոցներում խախտվում է երեխաների հավասար ու լիարժեք կրթություն ստանալու իրավունքը և նախարարության հանրակրթական դպրոցներին տրված սոցիալական պատվերը, այն է՝ կրթել ու դաստիարակել համակողմանի և ներդաշնակ զարգացած, առողջ հոգեբանություն ունեցող, պետական մտածողություն, քաղաքացիական ինքնագիտակցություն ու ինքնուրույն գործելակերպ ունեցող ՀՀ քաղաքացիներ: Արդյունքում ստացվում է, որ՝

1. հեռավոր մարզերի և սահմանամերձ շրջանների գյուղերի դպրոցների երեխաներն իրենց գյուղաբնակ լինելու հանգամանքի հետևանքով չեն ստանում քաղաքաբնակ երեխաներին հավասար լիարժեք կրթություն,
2. այստեղ մենք գործ ունենք նաև երկրի անվտանգային խնդրի հետ:

Սահմանամերձ շրջանների գյուղերը մեծ դերակատարություն ունեն մեր երկրի սահմանների անվտանգության հարցում: Իսկ եթե այդ գյուղերի դպրոցները ուսուցչական կադրերի պակասի պատճառով փակվեն, գյուղերը կդատարկվեն, դրանով իսկ կթուլանան երկրի սահմանները: Սահմաններն ամուր են կանգուն ու բարգավաճող գյուղերով, իրենց կանգուն և գործող դպրոցներով:

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական նոր կրթական ծրագիրը «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի հետ միասին պատրաստում է մանկավարժներ Հայաստանի հատկապես հեռավոր մարզերի ու սահմանամերձ շրջանների գյուղերի դպրոցների համար՝ լուծելով ինչպես կադրային, այնպես էլ Հայաստանի երեխաների հավասար կրթության հարցեր:

«Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամը «Կրթություն բոլորի համար» համաշխարհային ցանցի անդամ է: Հիմնադրամի ողջ ռազմավարությունը խարսխված է մարդկային կապիտալի զարգացման վրա:

«Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի տեսլականն է, որ ՀՀ յուրաքանչյուր երեխա, անկախ իր սոցիալական պայմաններից ու բնակության վայրից, հնարավորություն ունենա բացահայտելու իր ներուժը գերազանց կրթության շնորհիվ:

Այսօր «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամը գործում է Հայաստանի 10 մարզերում և Արցախում, աշխատում է 150 գյուղաբնակ դպրոցներում, որտեղ արդեն իրենց առաքելությունն են իրականացնում 170-ից ավելի ուսուցիչներ, որոնցից 26-ը ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողներն են:

2022 թ. ապրիլի 15-ին Երևանի պետական համալսարանի և «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի միջև կնքվեց համագործակցության պայմանագիր՝ համատեղ «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական նոր կրթական ծրագիր բացելու նպատակով: Սա գործատուի հետ համատեղ Կենտրոնի առաջին կրթական ծրագիրն է: 2022 թ. մայիսին կրթական ծրագիրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ստացել է լիցենզիա:

«Դասավանդի՛ր, Հայաստան» գործատուի հետ համատեղ կրթական ծրագրի նպատակն է Հայաստանի հեռավոր մարզերի և սահմանամերձ շրջանների գյուղերի հանրակրթական դպրոցների համար պատրաստել որակյալ ուսուցիչներ՝ ապագա մասնագետներին տրամադրելով ակադեմիական ու գործնական գիտելիքների հիմնարար բազա, որը կծառայի այդ դպրոցներում նորարարական մեթոդներով դասավանդմանը, դասարանական մշակույթի ձևավորմանը և համայնքի ներազդեցության ծրագրերի իրականացման միջոցով աշակերտների առաջադիմության աճին, համայնքի կյանքում առավել ակտիվ ներգրավված լինելուն, ինչպես նաև առաջնորդական հմտությունների զարգացմանը:

Ըստ կնքված պայմանագրի՝ «Դասավանդի՛ր, Հայաստանը» հավաքագրում է բարձրագույն կրթություն ունեցող նվիրյալների խումբ՝ մինչև 30 հոգի, ուղարկում է սովորելու ԵՊՀ մանակավարժության և կրթության զարգացման կենտրոնի «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական կրթական ծրագրում:

2022-2023 ուստարվանից սկսեց գործել կրթական ծրագիրը: Այս տարվա ուսանողների թիվը 26-ն է, որից 8-ը՝ արական սեռի: Ուսման տևողությունը 1.5 տարի է, ուսուցման կազմակերպման ձևը՝ հեռակա:

«Դասավանդի՛ր, Հայաստանը» մեր կրթական ծրագրի 26 ուսանողների հետ կնքել է պայմանագիր, ըստ որի՝ հիմնադրամը վճարում է 26 ուսանողների 1.5 տարվա ուսման վարձը, իսկ ուսանողները տալիս են իրենց համաձայնությունը՝ ուսումնառության ընթացքում և ավարտից հետո 2 տարի աշխատելու որպես ուսուցիչ Հայաստանի սահմանամերձ շրջանների ու հեռավոր մարզերի գյուղերի դպրոցներում: Գյուղերում մեր ուսանողների կեցության հարցը նույնպես լուծում է «Դասավանդի՛ր, Հայաստանը»: Մինչ տարբեր գյուղեր գործուղված մեր շրջանավարտները 2 տարի կիրականացնեն իրենց առաքելությունը, Կենտրոնը կպատրաստի հաջորդ 30 ուսուցիչների խումբը:

«Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված են մանկավարժական կրթաբլոկի դասընթացներ՝ «Ընդհանուր մանկավարժություն», «Տարիքային մանկավարժություն», «Կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ», «Դասավանդման մեթոդիկա», ինչպես նաև մանկավարժական պրակտիկա, գիտական սեմինար և մագիստրոսական թեզ:

Ուսումնական պլանում ներառված են նաև առաջնորդության կոմպետենցիաներ ձևավորող ու զարգացնող մի քանի դասընթացներ, ինչպիսիք են՝ «Ուսուցչական առաջ-

նորդության զարգացում», «Համայնքի ազդեցություն», «Կրթական հավասարությունը և երեխաների իրավունքները դպրոցում», «Դասարանական մշակույթի ձևավորում»: Այս դասընթացների շրջանակում ուսանողների մեջ ձևավորվում են աշխատանքները պլանավորելու և կազմակերպելու, մարդկանց մեկ նպատակի շուրջ համախմբելու և առաջնորդելու, առողջ ու դրական միջանձնային փոխհարաբերություններ ձևավորելու, նոր գաղափարներ առաջարկելու և առաջնորդելու կարողություններ, հաղորդակցման վերբալ և ոչ վերբալ ձևերի տիրապետում, ինչպես նաև նախաձեռնողականություն ու ստեղծարարական մտածողություն:

Կրթական ծրագրում ներգրավված են ինչպես Կենտրոնի դասախոսներ, այնպես էլ 4 մասնագետ «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամից:

«Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված (III կիսամյակ) մանկավարժական պրակտիկան ուսանողներն անցկացնում են այն դպրոցներում, որտեղ աշխատում են: Մանկավարժական պրակտիկայի նմանատիպ կազմակերպումը գործատու-բուհ կապի և համագործակցության հաջողված մոդել է, որն արդեն կիրառվում է աշխարհում:

Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն

Կենտրոնի մագիստրոսական կրթական ծրագիրը խթանում է աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելի կիրառումը՝ «սովորել աշխատելով» (work-based learning), որը ենթադրում է պրակտիկ կոմպետենցիաների ձեռքբերում՝ սովորելու ընթացքում աշխատելով: Այս արդիական մոդելի կիրառումը լուծում է կրթության ոլորտում ծառացած այն հիմնախնդիրը, որ տեսական ու պրակտիկ գիտելիքներն իրարից անջատ են, ինչպես նաև կրթական ծրագրերի շրջանակում նախատեսված պրակտիկան կարճ է և ոչ բավարար, ինչի արդյունքում հաճախ շրջանավարտները չեն համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին: Այդ է պատճառը, որ այսօր հաջողված են համարվում այն կրթական ծրագրերը, որոնք իրականացվում են գործատուի և կրթական հաստատության համատեղ ջանքերով՝ նպատակ ունենալով պատրաստել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ:

Ծրագրի մրցակցային դիրքը

Առաջին անգամ Հայաստանի բուհերից Երևանի պետական համալսարանում է ներդրվում «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական կրթական ծրագիրը: Այսպիսի կրթական ծրագրեր իրականացվում են արտասահմանյան մի քանի երկրներում, այսպես՝ ԱՄՆ Բերկլիի համալսարանում գործում է մագիստրոսական կրթական ծրագիր, որի անվանումն է՝ «Ուսուցիչներ՝ հանուն հավասարության ու գերազանցության»: Նմանատիպ կրթական ծրագիր է իրականացվում նաև Շվեդիայի Լուլեայի տեխնոլոգիական համալսարանում, որտեղ «Դասավանդի՛ր, Շվեդիայի» հետ համագործակցությամբ բացվել է «Լրացուցիչ մանկավարժական պատրաստվածություն հատուկ նպատակներով» անվանմամբ կրթական ծրագիրը:

ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի «Ուսուցչական առաջնորդություն» մագիստրոսական կրթական ծրագրի իրականացումը մեր երկրում համակարգային զարգացումն ապահովելու իր համեստ ներդրումը կունենա:

Մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն ամբողջովին համահունչ է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նպատակին՝ «ձևավորել ազգային ու համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր

փուլերում հնարավորություն է տալիս ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը» [3, 1]:

Մեր կրթական ծրագիրը սահունորեն զուգակցվում է ՄԱԿ-ի կայուն զարգացման 4-րդ նպատակի հետ, այն է՝ «*ապահովել ներառական և որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսումնառության հնարավորություն*» [2, 1]:

Կրթական ծրագիրը համապատասխանում է ՄԱԿ-ի 2030 օրակարգով սահմանված կրթության որակի բարձրացման և համընդհանուր ազգային զարգացման առաջնահերթություններին:

Եզրակացություն: Վերլուծությունը հիմնավորեց և հաստատեց «Ուսուցչական առաջնորդություն» կրթական ծրագրի կարևորությունն ու նշանակությունը Հայաստանում առաջնորդ-ուսուցիչներ պատրաստելու, համակարգային զարգացմանը նպաստելու և երեխաների հավասար կրթություն ստանալու իրավունքի պաշտպանությանը նպաստելու հարցերում:

Բանալի բառեր: Ուսուցչական առաջնորդություն, կրթության իրավունք, աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն, հավասար և գերազանց կրթություն, երեխաների իրավունքներ, համայնքի առաջնորդություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, Երևան, 1996, հոդված 11:

2. Կայուն զարգացման նպատակներ, Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Երևան, 2015:

3. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը», Երևան, 2022:

4. «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, 1989, հոդված 28:

5. Datnow A., Park V., Professional Collaboration whith Purpose: Theacher learning for Equity and Exellence in Public Education, 2019, San Diego, USA.

6. Harris A. and Jones M., Leading for equity: a moral imperative, School Leadership and Management, 38(3), pp. 239-241.

7. World Declaration on Education for all, World Conference on Education for all, Jomtien, Thailand, 5-9 March, 1990.

8. World Education Forum, Education for all: Meeting our Collective Commitments, Dakar, Senegal, 26-28 april, 2000.

Получено; 04.04.2023 *Received: 04.04.2023*
Рассмотрено: 06.04.2023 *Reviewed: 06.04.2023*
Принято: 14.04.2023 *Accepted: 14.04.2023*

Journal ''Education in the 21st Century'', Vol1-9/1/, 2023

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License